ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 3

Հայտերի վերջնական գնահատման նիստի

Շամբ ՀԷԿ-ում լրացուցիչ մեխանիկական պաշտպանություն գերարագությունից (թափառքից) նախագծման, տեղադրման և շահագործման հանձնման համար
ստացված հայտերի վերջնական գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 19/25**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2025-2027թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2026թ. հունիսի 17-ին, Ժամը՝ 11:00-ին Ք. Գորիս, ՀՀ

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Արամ Յոլյան
Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան Գավրուշա Աթայան Արտաշես Գրիգորյան Սևակ Սուրենյան Սահակ Մկրտչյան Արմինե Մանուկյան Անուշ Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Արման Պետրոսյանը տեղեկացրեց, որ Ֆինանսական հայտերը բացվել էին ս.թ. փետրվարի 9-ին ժամը 10:35, և TEAMS հեռահար զանգի ընթացքում Voith Hydro GmbH & Co. KG և «Քոնտեխ» ՍՊԸ կազմակերպությունների ներկայացուցիչները միացել էին առցանց բացման նիստին: Coupa համակարգում առցանց բացվեցին հայտատուների կողմից ներկայացված առաջարկները, և արձանագրվեցին հետևյալ արդյունքները՝

N	Մասնակից	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ՀՀ դրամ համարժեք, առանց ԱԱՀ
1	«Քոնտեխ» ՍՊԸ	138,561 ԱՄՆ դոլար	53,345,985
2	Voith Hydro GmbH & Co. KG	259,700 Եվրո	116,981,865

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով ստացված ֆինանսական առաջարկները դիմեց «Քոնտեխ» ՍՊԸ-ին պարզաբանել՝ արդյոք ծրագրավորման և կարգավորման zenon SCADA համակարգի ծառայությունները ներառված են գնային առաջարկի մեջ: «Քոնտեխ» ՍՊԸ-ն իր նամակում նշեց, որ գերարագությունից պաշտպանության սարքի միացումը առկա անվտանգության ռելեին գտնվում է իր մատուցվող ծառայությունների շրջանակում իսկ բոլոր ծրագրավորման աշխատանքները պետք է իրականացվեն ContourGlobal-ի կողմից, կամ երրորդ կողմի ինտեգրատորի միջոցով: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ գնային առաջարկը չի ներառում մրցութային փաստաթղթերում նշված բոլոր կոմերցիոն, պայմանագրային և տեխնիկական պարտավորությունների համար ծախսերը մրցութային փաթեթի 6.12 կետի պահանջների համաձայն: Ուստի հայտի շեղումը ընդունելի չէ և հայտը մերժվում է:

Մրցութային փաթեթի 6.19 կետի համաձայն կազմակերպվեցին գնի նվազեցման շուրջ բանակցություններ Voith Hydro GmbH & Co. KG կազմակերպության հետ: Բանակցությունների ընթացքում Voith Hydro GmbH & Co. KG-ն առաջարկեց 56,700 Եվրո զեղչ, որի արդյունքում գնային առաջարկը կազմեց 203,000 Եվրո կամ համարժեք 91,441,350 ՀՀ դրամ: Առաջարկվեց գնի օպտիմալացման արդյունքում կիրառել ՔոնթուրԳլոբալի անձնակազմի ներգրավումը՝ նախապատրաստման աշխատանքների ինչպես նաև սարքավորման տեղադրման իրականացման համար, որի արդյունքում գինը նվազեց 30,000 Եվրո և վերջնական գնային առաջարկը կազմեց 170,000 Եվրո կամ համարժեք 76,576,500 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով վերոգրյալը և ծանոթանալով գնային առաջարկներին, առաջարկեց հաղթող ճանաչել նվազագույն գին առաջարկած 170,000 (հարյուր յոթանասուն հազար) Եվրո առանց ԱԱՀ արժեքով Voith Hydro GmbH & Co. KG-ն: Պայմանագրի շնորհումը կատարել կազմակերպության բոլոր հաստատումները անցնելուց հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի նախագահ՝	Արամ Յոլյան	
Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան	

	Գավրուշա Աթայան	
	Արտաշես Գրիգորյան	
	Սևակ Սուրենյան	
	Սահակ Մկրտչյան	
	Արմինե Մանուկյան	
	Անուշ Հարությունյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	